Մրցույթ՝ ՀՀ Սյունիքի մարզի «Հալիձորի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի «Ֆիզկուլտուրա» (21 դասաժամ), «ՆԶՊ» (5 դասաժամ) առարկաների ուսուցչի թափուր տեղերի համար

Մրցույթի մասնակիցների գիտելիքների և մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ գրավոր և բանավոր: Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում՝

1. Գրավոր դիմում՝ նշելով այն աշխատատեղը, որին հավակնում է (Ձև 1),
2. Բարձրագույն կրթության մանկավարժական որակավորման աստիճանը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ), կամ վերջին տասը տարվա ընթացքում մանկավարժական կամ ուսուցչական գործունեության առնվազն 5 տարվա աշխատանքային ստաժը հաստատող քաղվածք աշխատանքային գրքույկից,
3. Անձնագրի պատճենը,
4. Ինքնակենսագրություն(Ձև 5),
5. Թափուր աշխատատեղը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքներին և աշխատանքային ունակություններին ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի, հավաստագրերի պատճենները (դրանց առկայության դեպքում),
6. Մեկ լուսանկար 3x4 չափի,
7. Այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունք,
8. ՀՀ արական սեռի ներկայացուցիչները ներկայացնում են նաև զինգրքույկը:

Փաստաթղթերի պատճենները ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերն ընդունվում են 2024թ-ի ապրիլի 11-ից մինչև ապրիլի 25-ը ներառյալ, ամեն օր ժամը 9:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի և ոչ աշխատանքային այլ օրերից:

Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի ըստ կարգի:

Մրցույթը տեղի կունենա **2024թ-ի մայիսի 3-ին՝ ժամը 14:00-ին**, ՀՀ Սյունիքի մարզի Հալիձորի միջնակարգ դպրոցում, հասցեն՝ գյուղ Հալիձոր, փողոց 1, շենք 8:

Տեղեկությունների համար զանգահարել 094-34-96-88 հեռախոսահամարով: